ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ծարունակվում է Մոսկվա՝ կենտրոնական իշխանություններին ու ԽՄԿԿ Կենտկոմին հասցեագրված նամակների, հեռագրերի հեղեղը: Դրանց մի մասի պատճեններն ուղարկվում են «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրություն, որոնք ամփոփում են մեր տքնաջան կոլեկտիվների ու անհատ քաղաքացիների, ամբողջ հայ ժողովրդի տագնապները, տառապանքներն ու ցավը, նաև հույսը, նաև զայրույթը: Բայց բոլորը մի նպատակ են հետապնդում. օգնություն են խնդրում, կոչ անում զսպաշապիկ հագցնել անզուսպ ատելությունից ու ջարդարարությունից մոլագարված հանցագործներին:

Քաղաքակիրթ ցանկացած պետական մարմին, պաշտոնատար անձ, մարդ անկարող է հանգիստ, առանց հոգեկան խաթարման կարդալ այդ աճազանգերը, տեսնել, թե ինչպես ամբողջ երկիրը միլիոնների կորուստներ է կրում ադրբեջանցի շովինիստների հակամարդկային գործողություններից:

Բայց հզոր երկրում մենք հայտնվել են անծայրաձիր անապատում մոլորված մարդու վիճակում, որը սեփական ձեռքերով ավազների տակ ջուր, օազիս փնտրելու փոխարեն անօգուտ գոռում, հա գոռում է՝ է՛յ, ո՞վ կա այդտեղ: Պետք է ի վերջո սթափվել: Խորհրդային Միությունում չկա Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի շրջափակում, ասում են Ադրբեջանում, այդպիսի պրոբլեմ մեր պետության գերագույն մարմինը անգամ չի ուզում ճանաչել: Եվ չնայած նրա որոշմանը, երբեմն-երբեմն հանրապետություն են գալիս թալանված ու ջարդուփշուր եղած վագոններ: Չէ՞ որ, ինչպես դեռ ոմանք մեղադրում էլ են, թե դատապարտելի սխալ է մի խումբ ծայրահեղականների ու ազգայնամոլների վարքագիծը տարածել ամբողջ ադրբեջանական հանրապետության վրա:

Երբ սումգայիթում նորօրյա ենիչերիները մորթում, բռնաբարում էին կանանց, երկաթյա ձողերով թեժացնում էին կրակն ու զոհերին արգելում փրկվելու փորձ անել, երբ ադրբեջանցի կանայք հայտարարում էին, թե՝ ցույց տվեք հայերին, որ արյունը խմենք՝ ո՞վ էր անողը: Երբ ՀԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի ամբողջ սահմանի երկարությամբ ադրբեջանցիների զինված հրոսակախմբերը հարձակվում են մեր գյուղերի վրա, մարդկանց սպանում, անասունները թալանում, շինություններն ու արտերն այրում՝ ո՞ւմ մեղադրենք: Երբ նույն ազգի մտավորականության ներուքը, հարևան հանրապետությանը պատերազմ հայտարարելու կոչ է անում ու այդ հայտարարությունը գործի դնում՝ շրջափակման ձևով, դարձյալ ծայրահեղականների՞ն մեղադրենք: Ավելին, կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչների գնահատականների ու հայտարարությունների մեջ հիմնականում ադրբեջանական հանրապետությունն ու նրա ղեկավար Վեզիրովը ներկայացվում են անմեղ, կատարյալ ինտերնացիոնալիստի լուսապսակով:

«Պրավդա» թերթի հոկտեմբերի 6-ի համարի առաջին էջում առաջնորդողի տեղը տպագրվել էր Գեորգի Օվչարենկոյի «Ընդհանուր ճակատով» վերնագիրը կրող հոդվածը: Հիմնականում թեման լայնարձակ երկրում մուեգնող քրեական հանցագործության դեմ մղվող պայքարի պրոբլեմն է:

Բայց տարօրինակը (մեզ՝ միամիտներիս համար) այս օրերին սև ագռավի փետուրները սպիտակով ներկելու մեզ քաջ հայտնի նպատակն է: Երբ ամբողջ աշխարհի հեռուստատեսային ու ռադիոհաղորդումները, մամուլը հեղեղված են ադրբեջանական հանրապետության կողմից կիրառվող բլոկադայով, թերթը գրում է, թե «... կորուպցիայի դեմ պատերազմ է հայտարարված Ադրբեջանում և Հայաստանում: Մի խոսքով, սառույցը կոտրվել է»: Հենց այդպես, ոչ ավել, ոչ պակաս: Ասել են, չէ՞, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման այնպիսի մի տարբերակ պիտի ընտրել, որ ոչ հաղթող լինի, ոչ պարտվող: Ու երկու տարի է, մամուլն ու հեռուստատեսությունը երկու հանրապետություններն իրար կապած են ներկայացնում, միշտ նույն թելով:

Նույն համարում առաջին էջում հրապարակվել է նաև «ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյում» ինֆորմացիան, որից պարզորոշ հասկացվում է, որ պաշտոնապես Լեռնային Ղարաբաղի ու Խորհրդային Հայաստանի բլոկադան չի ճանաչվում, որ այդ բառի հանախակի կրկնությունները լրագրային, հեռուստատեսային հաղորդումներում՝ սոսկ սոցիալիստական պլուրալիզմի արտահայտություն են թվում: Այդ նպատակով էլ քաղբյուրոյի հրապարակված որոշման մեջ, խոսելով ավերիչ երկրաշարժի ու եղբայրական հանրապետությունների օգնության, ավերված բնակավայրերի վերականգնման աշխատանքներում եղած թերությունների մասին, ոչ մի հիշատակում չկա շրջափակման մասին: Ավելին, մեղադրվում են հանրապետությունների ու մարզերի գերատեսչությունները, «որոնց մեղքով» աղետյալ գոտի չեն հասնում շինանյութերը, արդեն սովի ու անօթևան մնալու վտանգի առաջ կանգնած շինարարները տուն են վերադառնում:

Ինչևէ, թվում է բացահայտ կերպով հովանավորվում էր հանցագործը, որը, միևնույն է, պիտի կանգնի միջազգային դատարանի առջև, որպես ագրեսոր: Չենթադրե՞նք, որ ադրբեջանցիների կողմից կիրառվող բլոկադան մի շատ ավելի մեծ նպատակ է հետապնդում. աղետի գոտում կատարվող վերականգնման աշխատանքները ձախողել մինչև ձմռան գալը, որպեսզի երկրաշարժի հետևանքներն ավելի կատարյալ դառնան:

Նույն համարում ինֆորմացիա է տպագրվել նաև Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի, նրա ընդունած օրենքների, մասնավորապես՝ հանրապետությունը սուվերեն ճանաչելու մասին: Եվ ինչ-որ տեղ կարծես պիտի գոհ լինենք, որ նստաշրջանն օրենք չի ընդունել իր սուվերեն իրավունքները Նախիջևանից ու Արցախից բացի, նաև ՀԽՍՀ-ի վրա տարածելու մասին: Չէ՞ որ այսօրվա դեպքերը մեր ինքնուրույնության դեմ կատարվող իրական ոտնձգություններ են:

Մի քանի օր է, ինչ կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը տենդագին հաղորդումներ են հրապարակում ադրբեջանցիների ու նրանց բնակավայրերի վրա հայերի զանգվածային հարձակումների, ուղղաթիռով զենք ու զինամթերք Լեռնային Ղարաբաղ փոխադրելու մասին: Նախ, ոչ մի երաշխիք չունենք այդ տեղեկությունների հավաստիության համար: Հայերի կողմից ուղղաթիռով զենքի փոխադրումը նույնքան անհիմն չէ՞, որքան Լաչինի վրա կատարված հարձակումը: Եվ զարմանալին այն է, որ կենտրոնական հեռուստատեսությունը Կադիմբեկովի ինֆորմացիան վերագրում է ՏԱՍՍ-ին:

Մի պահ ընդունենք, որ, իրոք, հայերն են զենքը տեղափոխել Լեռնային Ղարաբաղ: Ոչ ոք չի հարցնում, թե ինչի՞ համար է այդ զենքը: Երեք օր առաջ հաղորդվեց, որ 300 զինված ադրբեջանցիներ հարձակվել են հայկական գյուղի վրա՝ պահանջելով հեռանալ իրենց հինավուրց հայրենի օջախից:

Մենք հարևաններ ենք և լավ հիշում ենք, թե նրանք ինչպես են տասնամյակներ շարունակ զենք կուտակում՝ որսորդական հրացանից սկսած մինչև գնդացիրները: Այդ փաստը վկայող հազարավոր վկաներ կան Հայաստանում:

Մեր զինվորականներն ինչո՞ւ չեն բռնում այդ հանցավոր ձեռքը:

Ավելի քան երկու ամիս է, ինչ Ադրբեջանը միակողմանի պատերազմ է վարում Խորհրդային Հայաստանի դեմ՝ դաժան, անողորմ ու անզիջում:

Մենք հո լավ գիտենք հեռավոր ու մերօրյա պատմությունից, որ բերդերն ու բնակավայրերը թշնամու կողմից պաշարվել են ամիսներով, անգամ տարիներով: Բլոկադան ռազմավարության դասական ձևերից է: Համոզված չե՞նք, որ այդքանը լավ գիտեն նաև ղեկավար մարմիններում: Գիտեն, որի պատճառով էլ պատերազմական գործողությունը ներկայացվում է որպես գործադուլ:

Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի պետ Ա. Ղանդիլյանը ճշգրիտ մեկնաբանեց ադրբեջանական կողմի տակտիկան: Երբ նստաշրջանն սկսում է աշխատանքը, մի քանի գնացքներ շարժվում են դեպի Հայաստան: Հետո ամեն ինչ նորից կանգ է առնում: Ի՞նչ նպատակ է դա հետապնդում:

Մեկ ուրիշ նրբություն էլ կա: Մեր թղթակիցը հայտնեց, որ Ադրբեջանում շաբաթներով թանկարժեք բեռներով լցված վագոններին մատ էլ չի դիպչում, իսկ տնակները, ավտոմեքենաները, պահեստամասերը թալանվում, ջարդուփշրուր են արվում, ցեմենտը ջրվում է, նավթամթերքներ, սնունդ, ընդհանրապես, չեն ուղարկվում:

Արցախի հայությունն այսօր կանգնած է սովի դռանը: Եվ այսքանից հետո ում կարող ես համոզել, թե այս բլոկադան պատերազմ չէ: Ադրբեջանին սամմանակից մեր գյուղերի բնակիչները մշտապես զինված հարձակման են ենթարկվում: Ու դեռ պիտի դատապարտել, որ հայը միջոց է փնտրում սահմանադրությամբ վավերացված իր ապրելու իրավունքը պաշտպանելու:

Անկեղծ լինենք և բացահայտ խոստովանենք իրականում գոյություն ունեցող ճշմարտությունը, իրերն ու երևույթները կոչենք իրենց անուններով: Լեռնային Ղարաբաղի բնակիչները ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրությունն հեռագիր ուղարկելով այն մասին, որ միլիցիոների համազգեստով զինված ադրբեջանցիներ բռնարարքներ են գործադրում հայերի դեմ, խնդրել են միջոցներ ձեռնարկել:

Բայց ահա միութենական մինիստրության գլխավոր վարչության պետ Ա. Ֆյոդորովը հեռագիրը վերահասցեագրել է Ադրբեջանական ԽՍՀ ՆԳ մինիստրություն: Կարիք կա՞ մեկնաբանելու, որ զոհի բողոքն ուղարկվել է հենց բռնարարքների հեղինակին:

Ավարտվեց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի հերթական երկօրյա նիստը, բայց դարձյալ քննարկման չդրվեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը: Քաղաքական գնահատական չտրվեց նաև Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Խորհրդային Հայաստանի դեմ ձեռնարկված ագրեսիվ գործողություններին՝ բլոկադային: Նստաշրջանում երկրի բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներից ու կենտրոնական մամուլի հրապարակումներից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ կարծես Ադրբեջանական ԽՍՀ-ն արդեն դուրս է եկել ԽՍՀՄ-ի կազմից, և կենտրոնական իշխանություններն իրավասու չեն միջամտելու այլ պետության ելուզակային ներքին գործերին:

Մի՞թե մենք՝ լրագրողներս, պետք է դիմենք երկրի և աշխարհի մեր կոլեգաներին՝ կոչ անելով՝ աշխարհի ժողովուրդներին ընկալելի դարձնել, թե ինչ է կատարվում արցախահայության ու Հայաստանի բընակչության հետ, թե ինչպես են կենտրոնական իշխանությունները լռության մատնում ադրբեջանցիների կողմից հայերի դեմ հարատև կրկնվող վայրագությունները:

Բոլորս լավ ենք հիշում, թե լրատվական միջոցներն ինչպես աղմկեցին, երբ Էստոնիան իր սուվերենության մասին օրենք ընդունեց: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հապշտապ որոշում կայացրեց՝ Էստոնիայի պառլամենտի այդ քայլը հերետիկոսություն համարելով: Հատկորեն շեշտվեց, որ Մերձբալթիկայի հանրապետություններում կրակի հետ են խաղում: Բայց ահա Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած ծայրահեղական օրենքի հանդեպ ասես բոլորը սկսվել են: Կենտրոնական թերթերն անգամ մասնագետների բանավիճային մեկնաբանություններ չեն հրապարակում: Չեն ասում. թե թե Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը բարձրացնելիս ամբողջ Ադրբեջանը պիտի հանրաքվեին մասնակցի, ապա տվյալ հանրապետությունը՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու խնդիրը դնելիս՝ պետք է հանրաքվե անցկացվի բովանդա՞կ երկրում:

«Պրավդա» թերթի երեկվա համարում հրապարակված ինֆորմացիան հաղորդում էր, որ Ադրբեջանի բաշիբոզուկները շրջափակել են նաև եղբայրական Վրաստանը: Անհավանական չէ, որ վաղը նույն բընակչության մեջ կհայտնվեն նաև այլ հանրապետություններ: Այդպես է, երբ ժամանակին չես սանձահարում ագրեսորին, նա ավելի է լկտիանում:

Մենք բոլորս գիտակցում ենք, թե ինչ է տեղի ունենում: Մեզնից յուրաքանչյուրը ճշմարիտ ու խելացի ելք է որոնում: Իսկ այդ ելքը պետք է գտնել ազգովին, սառը դատողությամբ, բայց ոչ անդամալուծող շատախոսությամբ ու ամիսներով:

Առջևում մեր Գերագույն խորհրդի նստաշրջանն է, որ կենսական, կարևորագույն օրենքներ է ընդունելու: Պետք է մոռանալ այլասերող ու բթացնող ուղղափառ, կեղծ գաղափարները: Անհրաժեշտ է մտածել Խորհրդային Միության հանրապետությունների շարքում ինքնուրույն ու ապահով վիճակ ստեղծելու, իսկական անկախության հասնելու մասին, երբ ոչ ոք չի կարողանա մեզ դնել այսօրվա ծանր, ազգային արժանապատվությունն ստորացնող վիճակում: Մոռանանք, որ բողոքներով ու հեռագրերով կարող ենք պատմության ճանապարհով ազատ քայլելու իրավունք նվաճել: Աշխատենք, շենացնել մեր հայրենին, շուտափույթ ձեռնարկենք նոր երկաթուղային մայրուղու շինարարությունը:

Մենք դառնանք մեր իրավունքի ու գլխի տերը:

Ուրիշ ճանապարհ չկա:

Խաչիկ ՄԽԻԹԱՐՅԱՆ